

ԼԵԶՈՒՄԳԻՏՏԱԿԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

Խաշնարածութեան և գիւղատնտեսութեան վերաբերմամբ իրանական ազգեցութիւնը նոյնպէս ոչինչ է հայերէնի վրայ (7 բառ փոխառեալ՝ 34 բնիկների դէմ): Բայց ընդհակառակը շատ ուժիղ է ձիազարմանութեան վերաբերմամբ. այսպէս ձիու սարքի համար ունինք 9 բառ, մինչգեռ բնիկ հայերէն ոչ մի բառ չկայ:

Եթէ ոչ արհեստների, գոնէ զիտութեան և գեղարուեստի վերաբերմամբ իրանական ազգեցութիւնը շատ նկատելի է. այսպէս ուսուցման համար ունինք 7 բառ, նկարչութեան համար 3, երաժշտութեան համար 11. մինչգեռ այս բոլորի համար ոչ մի հայերէն բառ չկայ: Շատ մեծ է նաև իրանական ազգեցութիւնը գոյների վերաբերմամբ. որովհետեւ հայերէն ունինք միայն երկու բառ (դեղին և դեղձան), իսկ պարսկերէն 12 բառ. բոլոր գլխաւոր գոյները պարսկերէնից են (սպիտակ, սեաւ, կապոյ, կարմիր). նոյն իսկ գոյն և երանց բառերը պարսկերէն են և այս զաղափարի համար ոչ մի հայերէն բացատրութիւն չկայ: Այսպէս է նաև լատիներէնը, ուր միայն կարմիրն է հնդեւրոպական. միւս գոյները անծանօթ են կամ փոխառեալ:

Վաճառականութեան և զրամական գործարքների վերաբերմամբ 2 բառ միայն կայ հայերէն (զին և զնել), մինչգեռ պարսկերէնից ունինք 23 բառ, որ ցոյց է տալիս իրանական ազգեցութեան մեծութիւնը այս կողմից:

Շինութեանց վերաբերեալ բնիկ հայերէն ունինք 12 բառ, իրանեան 30 բառ. հագուստեղէնի և արգուզարդի վերաբերեալ հայերէն 9 բառ, իրանեան 46 բառ. ուտեստեղէնի վերաբերեալ հայերէն 5 բառ, իրանեան 19 բառ. առտնին տնտեսութեան վերաբերեալ հայերէն 36 բառ, իրանեան

42 բառ: Նկատել պէտք է և այն որ այս կարգի բառերի մէջ հայերէն ձևերը ներկայացնում են ընդհանուր եւ հասարակ գաղափարներ (Տուն, կերպուր, ուտել...), իսկ պարսկերէնները մասնաւոր և առանձնայատուկ (ինչ գանին, պատճամ, մոյկ, մունակ, գրակ, նկան, խոչկեն ևն): Մրանից հետեւում է որ հայ տունը՝ անշուշտ յատկապէս ազնուական հայի տունը, արտաքուստ և ներքուստ կրում էր պարսկական սարք ու կարգաւորութիւն:

Թուերը հայերէնի մէջ գնում են մէկից մինչև 99. հարիւր բառի ծագումը անձանօթ է. աւելի բարձր թուերը՝ հազար եւ բիւր պարսկական փոխառութիւնն են: Չափերի և գրամմների վերաբերմամբ ոչ մի բառ չկայ հայերէն: մեր ցանկում յիշուածները ընդհանուր բացատրութիւններ են (բազում, կրկին, նեղ, ևն), իսկ պարսկական փոխառութիւնները (թուով 13) ցոյց են տալիս՝ որ այս կողմից էլ հայ կեանքը ամբողջապէս կրում էր իրանական ազգեցութեան կնիքը:

Մետաղների և հանքերի մասին արդէն գիտենք՝ որ նախահայերէնը շատ տկար էր. բացի աղից և արծարից ուրիշ ոչինչ չունէինք. իրանական քաղաքակրթութիւնն է որ ծանօթացը ել է մեզ 37 տեսակ հանք, մետաղ, խէժ, համեմ, թանկագին քարեր, անուշահոտութիւններ և նմաններ:

Ճամբի վերաբերեալ հայերէնը ունի 10 բառ, իրանեան բառերը 6 են միայն. բայց այստեղ ունինք երեք շատ կարևոր բառ. — կարաւանը ցոյց է տալիս հին ժամանակների ճամբորդութեան մեջ, որ շարունակում է մինչև այսօր էլ արևելեան աշխարհներում. — դեսպանն ու ժանուարը ցոյց են տալիս ճամբորդութեան միջոցները: Լեռնոտ երկիրներում և երկարատեւ ճամբորդութեանց համար սալլերը անյարմար էին, ձի հեծնելը փոքր մանուկների և ազնուական տիկինների համար գժուար էր. ուտեսի հնարել էին դեսպանի և ժանուարը: Առաջինը մի տեսակ հովանաւոր կառք կամ պատգարակ էր, որ ժառաները ձեռքերի վրայ բարձած տանում էին: իսկ երկրորդը (ժանուար) ներկայացնում էր ձիու կամ ջորու մէջքին բարձած մի զոյդ փոքրիկ սենեակ, յատակը գորգ կամ անկողին փոած և չորս կողմերը վարագոյրով

(*) Շարունակութիւն՝ մեծանուն ներինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գրքին Թ. Գրուշէն:

պատաժ։ Ամէն մի սենեակի մէջ նստում էր մի անձ։ Փանուարները մինչև այսօր էլ զործածական են Պարսկաստանում եւ արդի պարսկերէնով կոչւում են Եթովլա։

Ժամանակի վերաբերեալ հայերէն բառերը բաւական առատ են, պարսկերէնը հայթայթել է մեզ միայն տարուայ վեց ամիսների անունը։ Յայտնի է որ հին հայոց տոմարը կազմուած էր հատեեալ ձեռվ։ — տարին ունէր 12 ամիս, իւրաքանչիւրը միշտ 30 օրից բաղկացած։ Համագումարը լինում էր 360 օր, որի վրայ աւելանում էր Աւելեաց ամիսը, որ բաղկացած էր 5 օրից։ Հին հայերը նահանջի հաշիւը չպիտին և իրանց տարին ամէն մի քառամետին մի օր պակաս էր լինում։ Այդ տասերկու ամիսների անուններն են, նաւասարդ, հոռի, սահմի, տէկ, բաղոց, արաց, մենեկան, արեզ, ահենկան, մարերի, մարզաց և նրանից։ Մրանցից կէսը (նաւասարդ, տէկ, մենեկան, ահենկան, մարզաց և նրանից) պարսկերէն են։ Իռոի և սահմի բառերը՝ ինչպէս գիտենք, ներկայացնում են վրացերէն 2 և 3 թուականները, արեզ՝ հայերէն արեզ (արեգակ) բառն է, թարգմանաբար կազմուած պարսից համապատասխան ամսանունից, իսկ միւս երեքը (բաղոց, արաց, մարերի) անծանօթ են։ Տոմարը պարսիկների մէջ էլ այս մինչոյն կազմութիւնն ունէր, որոնցից էլ փոխառութեամբ անցաւ հայերին։ Ուստի զարմանալի չէ որ վեց ամսանուն և մէկ ամսի էլ թարգմանութիւնը միասին ժառանգած լինին հայերը։

Գալով շաբաթուայ օրերի անունին, գիտենք որ այստեղ զանազան լեզուների մէջ սովորաբար երկու ձեւ կայ։ — Մի խումբը օրերն անուանում է երկնային մարմինների անունով, միւս խումբը՝ պարզ թուականներով։ Առաջին խմբին են պատկանում երրորդական լեզուները, ինչպէս օր լատիներէնը, գերմաններէնը, իտալերէնը, ֆրանսերէնը, անգլերէնը ևն։ Արանց մէջ կիրակին = արեգական օր, երկուշաբաթին = լուսնի օր, երեքշաբաթին = Մարսի կամ Հրատի օր, չորեքշաբաթին = Փայտածուի օր, հինգշաբաթին = Լուսնիտագի օր, Ռուբաթը = Աստղական օր, շաբաթը = Երեւակի օր։ Երկրորդ խմբին պատկանում են միւս լեզուները, ինչպէս յունարէնը, պարսկերէնը, ասորերէնը, վրացերէնը, ոռուսերէնը, պատկան գիտենք թիւները, հարկալին սիստեմը, ուազմական գիտենք թիւնը, զէնքերը, մէ

րէնը, ինչպէս նաև հայերէնը։ Մրանց մէջ, ինչպէս ասացինք, օրերը համարւում են ըստ համարի՝ սկսելով կիրակի օրուանից, Այսպէս հյ. միաշաբաթի, երկուշաբաթի, երեքշաբաթի, չորեքշաբաթի, հինգշաբաթի։ Այս կէտում էլ հայերէնը նոյն է պարսկերէնի հետ։ բայց թւում է թէ մեր օրերի անունները կազմուած են ոչ թէ պարսկերէնի, այլ ասորերէնի ազգեցութեամբ, գոնէ իրենց վերջին ձեռի տակ։ Այդ երեւում է նրանից որ ուրբաթ և շաբաթ օրերը չեն կոչւում վեցաբրի և եօրեաբրի կամ մի այլ ձեռվ։ այլ ուղղակի ասորերէն են։ ուրբար փոխառեալ է ասոր։ ըրուբբա ձերից, և տաբար ասոր։ տաբբբա ձերից։ Առաջինը նշանակում է բուն սպատրաստութիւնն, ըստ որում շաբաթ օրը սուրբ պահելու համար ուրբաթ օրուանից ամէն բան սարգում պատրաստում էին։ իսկ երկրորդը՝ շաբաթ, նշանակում է բուն հանգիստ», որովհետեւ այդ օրը աշխատանքը գագարեցնում էին։ Ինչպէս մահմետականութիւնը, նշանապէս քրիստոնէութիւնը գրիստոնեայ ազգերի մէջ եկաւ որոշ օրերի անունը փոխելու։ Մեր մէջ էլ միաշաբաթին զարձաւ կիրակի, որ յն կիւրակի ատէրունական» բառն է, ինչպէս լու գոմինիկա, ֆր. դիմանե, որ նոյնպէս նշանակում է «ատէրունի» և ուու. վասկրեսենինե, որ նշանակում է «յարութիւն», ի յիշատակ Քրիստոսի յարութեան, որ տեղի է ունեցել նոյն օրը։

Պարսկական քաղաքակրթութեան եւ լեզուի ազգեցութիւնը իր մեծագոյն աստիճանին է հասնում պետական կազմի վերաբերմամբ։ Այստեղ բնիկ հայերէն բառ համարեա թէ չկայ, իսկ պարսկերէնից փոխառութիւնները 159 հատ են։ Այս բառերի մի մասը իրօք որ պատկանում են զուտ պարսից պետական կեանքին (ինչ զինդականական էն), բայց ամենամեծ մասը այնպիսի կենսական բառեր են մեր լեզուի համար, որ այսօր էլ շարունակում են իրենց գոյութիւնը և առանց նրանց մինք չգիտենք թէ ինչպէս պիտի բացարուելինք (օր. զրահ, դրօւակ, հրովարտակ, պահակ ևն)։ Այս բոլորը ցոյց է տալիս որ հին հայոց վարչական ձեր, գիւտական գործողութիւնները, հարկալին սիստեմը, ուազմական գիտենք թիւնը, զէնքերը, մէ

իսոսքով ամբողջ պետական կազմը պարս-
կական ձեռով էր։ Հայաստանը իրքի մը
երկրորդ Պարսկաստան էր։

Երկար չենք ուզում խօսել սովորական
կեանքի բառերի (168), մակայների և նը-
մանների (22) մասին, որոնց թիւը թէն
հայերէնից պակաս, բայց գտրձեալ ինքնին
շատ մեծ է, նշանակելու համար պարսկա-
կան քաղաքակրթութեան և նրա հետ միա-
սին պարսկական լեզուի խոչօր աղղեցու-
թիւնը մեր վրայ:

Մենք մինչև այստեղ թռեցինք եւ
ուսումնասիրեցինք հայերէնի իրանական
հասարակ անունները և չլիչեցինք յատուկ
անունները։ Հասարակ անունները զնահա-
տելի են նրանով, որ նրանցից զրեթէ իր-
աքանչիւրը մի կուլտուրական կողմ է
բացատրում կամ մատնանշում։ Յատուկ
անունները այդպէս չեն. նրանք ընդհան-
րապէս ցոյց են տալիս փօխառու լեզուի
ազգեցութեան ուժը փօխառուի զրայ։ Այդ
պատճառով մենք էլ բաւականանում ենք
տալով միայն մի ընդհանուր ծանօթութիւն
հայերէնի մէջ փօխառեալ յատուկ անուն-
ների վրա։

Յատուկ անունները բաժանում են
երկու կարգի. անձնական և տեղական։
Դեռ չկայ մի այնպիսի աշխատութիւն, ուր
հաւաքուած և մեկնուած լինէին այն բոլոր
անձնական ու տեղական յատուկ անունները, որոնք գործածուած են հայոց մէջ
սկզբից մինչև այժմ։ Ամէնից կատարեալ
հաւաքածոն գտնուում է Հիւըշմանի քե-
րականութեան մէջ, որից օգտուում ենք
նաև մենք։ Այդ աշխատութեան մէջ իրա-
նականից փոխառեալ հայկական յատուկ
անունները հետեւալիներն են.

Անձնական յատուկ անուններ (122 հատ)

Անահիտ, Անոյշ, Արշանյոյ, Սահմականյոյ, Սմբատանյոյ, Վարդանյոյ, Խոսրվանյոյ, Անուշվամի, Հրանյոյ, Աւիտեն, Ապրամի, Արամազդ, Արշակ, Արշամ, Արշալիր, Արշակ, Արշակու, Արշաւազդ, Արշաւան, Արտեն, Արտաշեն, Բագարաս, Բամբիթեն, Բատ, Գուռորդ, Դաս, Դատաքեն, Դորիդուիտ, Սահմանյուիտ, Սահմանյուիտ, Վարագուիտ, Վարանյուիտ, Վարանանյուիտ, Վրուպիդուիտ, Երանենդ, Զանզակ, Զարեն, Զարմանդուիտ, Զափրանիկ, Զրուանդ, Զրուանդուիտ, Խոս-

րով, Խոսրովիւնի, Խոսրովիդուխս, Համա-
զասպ, Համազոսպեան, Համազոսպունի, Հմայեսկի, Հրահան, Մամակ, Մանահինր, Մանաւազ, Մանեն, Մարասպանդ, Մենեն-
դակ, Մենեւանդակ, Մերուժան, Մինր,
Մինր - Արտաշիր, Մինրդա, Մինրապուն, Ցազդ, Ներշապուն, Ներսեն, Ամիններսեն, Շահանդուխս, Շահակ, Շապուն, Մերշ-
պուն, Շաւասպ, Շաւարծ, Շերոյ, Պապ,
Ջուանենց, Խոստոմ, Սանարունկ, Սասոյ,
Սուրեն, Սպանդարյան, Ստահրաւապուն, Վա-
հազն, Վահրամ, Վռամ, Վռամեապուն, Վահրին, Վաղարշ, Վաղարշակ, Վասակ,
Վարազ, Վարազ - Գնել, Վարազ - Գրիգոր,
Վարազդաս, Վազգեն, Վարազդուխս, Վա-
րազման, Վարազ - Ներսեն, Վարազօսպուն,
Վարազզարսն, Վարազքիրոց, Վարազքրդաս,
Վարդ, Վարդիկ, Վարդենի, Վարդունի,
Վարդան, Վարդանդուխս, Վենիկ, Վսամ,
Վրիեն, Գուրգեն, Տիգրան, Տիրան, Տիրիկ,
Տրեայր, Տրանամ, Տրունկ, Տրդա, Փառ-
ներսեն, Փառեն, Քարքարուն:

Տեղական յատուկ անուններ (37 հատ)

Արշակաւան, Արտամեծ, Արտաշատ, Բա-
գրաբան, Բագրաւան, Բագրյառին, Բագրե-
ւանդ, Բագրայր, Գանձակ, Երուանդաշատ,
Երուանդակերս, Երուանդաւան, Զարեհա-
ւան, Զարիշատ, Խոսրովակերս, Ռազդան,
Մանաւազկերս, Ներսենապատ, Շաւարչան,
Ումդղպերոժ, Պերոզապատ, Հրաբուտերոժ,
Սպանդարապերոժ, Վաղարշապատ, Վաղա-
րշակերս, Վաղարշաւան, Վասակաշատ, Վա-
սակաչեն, Վասակակերս, Վասպուրական,
Վազկերս, Վարազաբլուր, Վարազ, Վարդա-
չեն, Վարդանաշատ, Վարդանակերս, Տիգ-
րանակերս:

Այս երկու ցուցակներից երեսում է որ՝
1. Այն բոլոր յատուկ անունները՝ որ
ներկայացնում են մեր պատմութեան հին
ու գուրգուրալի ժամանակի նուիրական
դէմքերը և որոնք մեր արդի հայեացքով՝
մեղ այնպէս սիրելի, բնիկ ու հարազատ
ազգային հայկական են համարւում, ամ-
բողջապէս պարսկերէն են։ Պարսիկները
ընդունելով մահմեդականութիւնը՝ հրա-
ժարուել են իրենց ազգային անուններից
և ընդունել արաբական Ալին, Հասանը,
Հուսէյնը, Մամաղը և Սրգուլահը, եւ
այսօր մենք լսելով այդ անունները պար-

սիկներից, ամենն ին չենք կասկածում հայ անուների իրականութեան վրայ: Մինչդեռ իրականութիւնն այն է՝ որ այսօր պարսկական անուն չկայ, հայերի անուններն են որ պարսկական են:

2. Մեր աստուածների անուններից հինգը զուտ իրանական են. այսպէս Արամազգը, մեծն ու արին, հայր ամենայն աստուածոց, արարիչ երկնի և երկրի, տուող լիութեան և պարարտութեան, իրանական Անուրամազդան է, գերազոյն աստուածութիւնը, որի անունը նշանակում է «Տէր իմաստնագոյն»: — Մեծն Անահիտ տիկին, ծնունդ մեծին Արամազգայ, ոսկեծին եւ ոսկեմայր, մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, որով կեայ և կենդանութիւն կրէ երկիրս հայոց, իրանական Անահիտան է, իդական ոզի, որ բխում է Արամազգից, որից գուրս են գալիս ամբողջ աշխարհը պալարերող ջրերը և նորից իրեն են վերագառնում, և որի անունը նշանակում է «անարատ»: — Միհր, Արամազգի որդին, իրանական Միհրան է, և աւսոյ աստուածութիւնը, միշնորդ մարդկութեան և Արամազգի միջն: — Վահագն վիշշապաքաղ, իրանեան Վերցազնան է: — Տիւր զիք երազացոյց, երազընդհան, դպիր զիտութեան, զրիչ Արամազգայ ուսման ճարտարութեան, իրանական Տիւր, որ է ամառնային եղանակի ներկայացուցիչը:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Ը-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ)



ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԻՄՐՈՍԻ ՅՈՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ^(*)

Կիպրոսի երբեմնի 15 եպիսկոպոսական թեմերէն մնացած է միայն 1 արքեպիսկոպոսական, ու 3 եպիսկոպոսական թեմեր, բայց ասոնք մետրապոլիտի աստիճանով կը ճանչցաւին, որովհետ կիպրոսի արքեպիսկոպոսը անկախ ամռուակալ է ու պատրիարքական իրաւունքներ ունի: Կիպրոսի արքեպիսկոպոսը նախապէս կը բնակէր Կիպրոսի երբեմնի ծաղկեալ զերագոյն մայրաքաղաք՝ Սալամիսի մէջ (որ Կիպրոսի 9 թագաւորութեանց գլխաւորագոյնին մայրաքաղաքն էր, ու յիսու կոչուած էր կոստանդիա): Արքեպիսկոպոսը այժմ կը բնակի Նիկոսիոյ մէջ, ու ինչպէս ուսումնասիրութիւնը ցոյց կուտայ: Կը կրէ արքայական զաւագան, ու ծիրանեղոյն կայսերական գիլճն, ու անոնը կը ստորագրէ ժիրանի (կիպրոսի) մելանով:

Թէ՛ ինք, ու թէ միւս 3 եպիսկոպոսները եկեղեցիներուն մէջ կը յիշատակուին պատմական տիտղոսներով. ու նիւթին հետաքրքրութեանը համար, ստորև կուտամ անոնց հայերէնի թարգմանութիւնները.

Արքայի կոլուսին

«Ամենահրանելի ու Գերյարդելի Արքեպիսկոպոս, նոր Յուսուտինիանոսին ու համայն Կիպրոսի»:

Պատօսի Եպիսկոպոսին

«Գերօրհնեալ ու Աստուածմէ արտօնուած մետրապօլիտ Պաֆոսի ու պատուակալ էքսարք Արքինոյի ու Հռովմէցւոց»:

Կիտինին Եպիսկոպոսին

«Գերօրհնեալ ու Աստուածմէ արտօնուած մետրապօլիտն Կիրենիոյ ու Նախազան Ամաթուսի, Լիմասոլ նոր քաղաքին ու Կուրիոնի»:

Կիրենիոյ Եպիսկոպոսին

«Գերօրհնեալ ու Աստուածմէ արտօնուած մետրապօլիտն Կիրենիոյ ու Նախազան Ասուլիայի»:

Վերոյիշեալ հետաքրքրական տիտղոսները ամէն պատարագներու ընթացքին կիպրոսի Յութիան եկեղեցիներու մէջ մեծաձայն կ'երգուին սարկաւագներու կողմէ:

Գրեթէ 10 տարիներէ ի վեր Կիպրոսի Յութիան նւզզափառ եկեղեցին կը կառավարուի տեղապահ եպիսկոպոսով մը: Հաստ օրէնքին միշտ կ'ընտրուի Պաֆոսի մետրապօլիտը: Կիպրոսի վերջին Արքեպիսկոպոս Կիւրեղ Գ. ի մահէն վերջ, Պաֆոսի մետրապօլիտ՝ Տէր Ղեռնդիոս (Լէռնտիոս) Սըրազան Եպիսկոպոսը, որ երիտասարդ, զիտուան ճարտասան եկեղեցական մըն է, ու կըթուած

(*) Հետեւակը վերջարան է շահեկան այն ուսումնական գոր Պր. Խուզար Մաքսուտան կոստանդ է, ժամանակներու համար պատմութիւնը կիպրոսի Յոյն Ուղղափառ եկեղեցին: